

Բարակը ձեռք բերող եւ արարներուն յանձնողը եղաւ այս Սահլ Իպն Մնրատը:

Աճառեան իր Անճմանուններու բառարանին մէջ՝ թիւ 2 ՍԱՀԼԻ մասին կը գրէ. «Որդի Սմբատ Խոստովանողի, եղբայր Աշոտ Ա.ի, յաղթեց եւ բռնեց Բարան պարսիկին»: Աճառեան նոյն գործին 36րդ Սմբատի մասին խօսած տեսն՝ զայն կը կոչէ «Առանչահիկ քաջ իշխան Աղուանից, յաղթեց Բարան պարսիկ իշխանին»:

Տարակոյս չկայ որ վերը յիշուած երկու Բարաններն ալ նոյն Բարակն է: Աճառեան շիոթութեան զոհ գացած է: Սահլ Իպն Մնրատ չէր կրնար ըլլալ եւ չէր որդին Սմբատ Խոստովանողին, որ Բաղրատունի էր:

Կաղանկատուացի կը վկայէ որ «ի ընուի երկերիւր եօթանասուն թուոյ չայոց (821) ելին զպարտարար ի Պարտաւայ արք ընտիրք ի Տաճկաց եւ ի յաւարի ատին զԱմարաս զաւառ՝ զերի տեսալ իրրեւ ոյիս հազարս, եւ ի Մեծիրանց սահմանի ամբացեալք՝ ի տեղոջն որ կոչի Շիկաբար: Յայնժամ արի եւ շքեղատեսակն Սահլի Սմբատեան Եռանչահիկն տէր՝ քաջագոր եղբարքք իւրոյք եւ զօրօք ի լուսանալ առաւօտուն ի վերայ յարձակեալ առ հասարակ զիաթաւալ գնոսս ցիրուցան կացուցանէին, եւ որպէս յառիւժոյ ժանեաց զգերեակսն ի բաց կորդին» (էջ 374):

Սաի կամ Սաիկ Սմբատեան նոյն անձերն են, որուն արար պատմիչները Սաի Իպն Սմբատ կոչուած կու տան: Իրապէս Սմբատի մը որդի՞ն էր այս Սահլը՝ թէ պարզապէս Սմբատեան տոհմի պատկանելուն համար Իպն Սմբատ, կամ ըստ հայոց՝ Սմբատ կը կոչուէր: Առ այժմ վերջնականապէս կարելի չէ ըսել:

Սահլի Սմբատեան կամ Սահլ Սմբատեան այսպէս կը յայտնուի 821ին: Կաղանկատուացի զայն կը կոչէ արի եւ շքեղատեսակ, անոր քաջ եւ գեղեցկակազմ ըլլալուն համար անտարակոյս:

821ին Պարտաւի կողմէն Տաճիկներ ա-

ւարի կ'աննեն Ամարասը՝ Ախցնեաց Վարանդա զաւառին մէջ (Մուղանի զաւո), եւ ասպատակները հազարի մօտ զերիներով Մեծիրանց սահմաններուն մէջ՝ Շիկաբարի մէջ կ'ամբասնան:

Ո՞վ էին այս ասպատակները: Կաղանկատուացի զանոնք արք ընտիրք ի Տաճկաց կը կոչէ, Պարտաւի կողմերէն: Նախ ուրեմն անոնք Արարներ չէին: Պէտք է նրկատել որ այս Տաճիկները պարզապէս ասպատակներ էին, եւ ոչ թէ նուաճող բանակ: Իրապէս կարելի է զանոնք նոյնացընել Բարակի հետեւող աղանդաւորներուն:

Բար Հերբայոս խօսելէ վերջ 829 թուի զէպքերու մասին՝ կը գրէ. «Այս տեսն Քուրտանիէի ժողովուրդը, որոնք Մուսլիմաններ էին, ապստամբեցան Արարներուն դէմ, որովհետեւ իրենց երեւցած էր թագաւոր մը, (երկար) տեսն ակնկալուած Մահլին: Այս մարդը իր երեսին քող մը ձգած՝ զայն ծածկելով, ինքզինքը կը կոչէր Քրիստոս եւ Սուրբ Հոգի: Մարդոց բազմութիւն մը հաւաքուեցան իր շուրջ, եւ ան բանակատեղ մը ամբացուց Քարաէվայի ձերկրին լեռներուն մէջ: Եւ նոյնիակ Մամուն (Արարացուց Խալիֆան, Յ. Ք.) կը զողար իրմէ. եւ ան զրկեց Հասան, բանակին հրամանատարը, անոր դէմ, եւ Հասան կալանաւորեց Տուր-Արդինի մէջ, մինչ ան Կարտամիւնի վանքը կը կողոպտէր: Եւ Քուրտանայանները կոտորուեցան, եւ Մահլին փախաւ Իսաակ Բար-Ահուտի, Հայուն երկիրը: Եւ Իսաակ բռնեց զայն եւ զլուխը կտրեց»: Յետոյ Քուրտանցիները հաւաքուեցան միատեղ դարձեալ, եւ բանակեցան Իսաակի բերդին դիմաց, մինչ ան կը պատրաստուէր զուրսը: Եւ անոնք որ բերդին մէջ էին մեծապէս կը զողային (վախէն): Յետոյ երբ Իսաակի կնոջ վանական եղբայրը տեսաւ որ Քուրտանայանները բերդ մտնելու վերայ էին, նիդակ մը առաւ եւ պարիսպէն վար նետուելով, եւ ուղղակի Քուրտանայաններու գլխաւորին յառաջանալով, իր